ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 425

<<02>> հունիսի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ <<ՄԱՐՄԱՇԵՆ ՁՈՐ>> ԿՈՉՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՉ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով քաղաքացի Նատալյա Վլադիմիրի Կոլեսնիկովայի լիազորված անձի՝ Ալբերտ Դերձակյանի դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրի՝ 26.05.2023թ. ժառանգության գործ թիվ 834 հիման վրա ոչ գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության իրավունքը պայմանագրով Նատալյա Վլադիմիրի Կոլեսնիկովայի անունով վերաձևակերպելու մասին

որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մարմաշեն գյուղի <<Մարմաշենի ձոր>> կոչվող տարածքում գտնվող Ռուդիկ Խաչատուրի Խաչատրանին /մահացած 2021 թվականի դեկտեմբերի 24-ին/ վարձակալության իրավունքով տրամադրված 2.9 հա ոչ գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության իրավունքը վերաձևակերպել ըստ օրենքի ժառանգություն ընդունած ժառանգ՝ Նատալյա Վլադիմիրի Կոլեսնիկովայի անվամբ /ծնված՝ 1957 թվականի դեկտեմբերի 22-ին, անձնագիր՝ 45 06 953385 տրված՝ 2003 թվականի նոյեմբերի 10-ին, ստորաբաժանման կոդ 772-037/, 04.09.2002թ. սեղանամատյան թիվ 270 կնքված պայմանագրի մնացած պայմանների առանց փոփոխության, (հողամասի յուրաքանչյուր

տարվա վարձավճարի չափը՝ 15500 /տասնհինգ հազար հինգ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ, վարձակալության պայմանագրի ժամկետը՝ մինչև 04.09.2101թ.):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

02 հունիսի 2023 թվականին
Գյուղ Ախուրյան